

Հ. Ս. Խ. Հ. ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏ. ԲՅՈՒՐՈ


№ 6

Հ Ո Ւ Շ Ի Կ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ
ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ՅԵՐԵՎԱՆ

1930



Հ. Ս. Խ. Հ. ԳԱՎԱՌԱԳԻՅԱԿԱՆ ԿԵՆՏ. ԲՅՈՒՐՈ

№ 6

Հ Ո Ւ Շ Ի Կ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ
ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

17468

A 8831



ՅԵՐԵՎԱՆ

1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 3542
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 5389 (Բ)
ՏԻՐԱԺ 3000

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՎԱՌԱԴԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԱՆՆԵԼԻՔՆԵՐԸ

Մեր յերկրի շինարարության, առանձնապես նրա վերակառուցման շրջանում չափազանց կարևոր և դառնում տվյալ միջավայրն իր բոլոր կողմերով լավ ճանաչելու խնդիրը, հանդես բերելու թագնված այն բոլոր հարստությունները, վորոնք անհրաժեշտ և ոգտագործել մեր վերակառուցման աշխատանքների այս կամ այն բնագավառում: Լինում են դեպքեր, յերբ աշխատանքները չեն տալիս ցանկացած ու սպասած արդյունքները. և սրա պատճառը մեծ մասամբ լինում և այն, վոր նախորդք լավ ուսումնասիրված չի լինում տվյալ միջավայրը կամ, ինչպես ասում են, աշխատանքը կապված չի լինում տեղական պայմանների հետ, ավել կամ պակաս չափով են ոգտագործված լինում տեղական հնարավորությունները: Ել չենք ասում այն մասին, վոր շատ հաճախ նույնիսկ չի ել մտածվում ձեռնարկել այս կամ այն արդեն հայտնաբերված բնական արտադրական հարստությունները մշակելու մասին:

Այս տեսակետից մեծ աշխատանք ունեն

կատարելու գալառագիտական կազմակերպութ-
յունները, (ընկերություններ, խմբակներ,
գալառագիտական ինստիտուտներ և այլն),
վորոնք իրենց գիտողություններով, հետազո-
տություններով և ուսումնասիրություններով
հանդես են բերում իրենց գործունեյության
չբջանի ամբողջ պատկերը բազմապիսի ուղ-
ղություններով—աշխարհագրական, կլիմա-
յաբանական, բնապատմական, տնտեսա-
կան, պատմական, ազգագրական, մարդո-
բանական, հնագիտական, լեզվաբանական,
կոոպերատիվ և այլն:

Պետք է ասել, վոր Խորհրդ. Միությունն
ընդհանրապես լրիվ չի ուսումնասիրված:
Վորքան ել դարձանալի լինի, համենայն դեպս
չափազանց բնորոշ է, որինակ՝ «Известия ЦИКа
СССР»-ի 1924 թ. № 265-ի հաղորդագրու-
թյունը, թե Միրիրում գյուղեր են յեղել, վո-
րոնց գոյության մասին վոչ վոք անգեկություն
չունեն: Հեռագիրը հաղորդում եր. «Տարեկի
գալառում Ստարո—Վասիլևսկ գյուղից 50
վերստ հեռավորության վրա Տույ գետի ափին
հայտնաբերվել է մինչ այժմ բոլորին անծա-
նոթ մի ավան Ուստ Իշիմսկի անունով: Այս-
տեղ կա ութը խրճիթ. այդ ավանը մինչ այժմ
վոչ մի հարկ չի տվել, և նրա բնակիչները վոչ
մի գաղափար չունեն հարկերի մասին: «Գրո-
նված» այդ ավանն ընկած է Ոմսկից հաղար
վերստի վրա և Տար գալառական քաղաքից
400 վերստի վրա» (Տես «Первые шаги Кра-

«ВЕДА» յերես 6): Այդ փաստը չափազանց հետաքրքիր և այն տեսակետից, վոր իրոք շատ ու շատ աշխատանք կա կատարելու մեր յերկրի ուսումնասիրության բնագավառում:

Մեզ մոտ Խորհրդային Հայաստանում ևս շարունակարար յերևան են բերվում թագնված բնական շատ հարստություններ ու հնարավորություններ, վորոնք մեծագույն չափով արագացնում են ու ընդլայնում մեր ժողովրդական տնտեսությունը: Նշանակում է յերկրի ուսումնասիրական աշխատանքը միշտ ել պետք է շարունակվի. և վորքան արագ թափով, այնքան ավելի շատ ու շատ հնարավորություններ կարող են ստեղծվել մեր տնտեսական վերելքի համար:

Անշուշտ մեր յերկրի բոլոր շրջաններումն ել, բոլոր վայրերումն ել մեր աշխատանքի հիմնական նպատակը մեկ է—յերկրի շուտափույթ ինդուստրացում և կոոպերացում հանուն սոցիալիզմի հաղթանակի: Սակայն կարեւորն այն է, վոր բոլոր շրջաններումն ել չի կարելի աշխատանքի միեւնույն ձևերն ու միեւնույն թափը դործագրել, վորովհետև ամեն մի միջավայր պոնվում է ուրույն պայմանների, ուրեմն և ուրույն հնարավորությունների մեջ: Ուստի և վերահիշյալ նպատակին հասնելու միջոցները պետք է համաձայնեցված լինեն տվյալ վայրի հնարավորությունների, նրա բնական, տնտեսական, պատմական, կենցաղային և այլ պայմաններին հետ: Գալառագիտական աշխատանքը

ների միջոցով ահա հնարավորություն ե լինում պարզելու, հանդես բերելու վերահիշյալ բոլոր հնարավորությունները: Այլ կերպ ասած՝ գավառագիտությունը—զբաղված ե ուսումնասիրությամբ այն վայրի, վորի մեջ ապրում ու գործում ե խորհրդային տվյալ աշխատավորը: Այդ վայրն ի հարկե կարող ե լինել մեծ կամ փոքր ծավալով՝ նայած տվյալ աշխատակցի աշխատանքի մասշտաբին,— գյուղ, շրջան, գավառ ե այլն: Այստեղից կարելի յե յեղրակացնել նաև, թե ինչ ե նշանակում լինել գավառագետ: Սրա բնորոշումը չափազանց գեղեցիկ կերպով տալիս ե ընկ. Բլոնսկին, թե՛ «Լինել գավառագետ նշանակում ե տվյալ վայրում փնտրել բոլոր հնարավորություններն՝ իր ուժերն աշխատանքի մեջ գործադրելու համար»:

Հաճախ կարծում են, թե բավական ե մարդ լինի տեղացի, վորպեսզի ամբողջովին գիտենա իր միջավայրը: Անշուշտ այդ հանգամանքը բավական չի. լինել տեղացի, չի նշանակում լրիվ գիտենալ միջավայրը. ճիշտ ե այդ հանգամանքը ղգալի չափով կարող ե նպաստել, սակայն այդ դեռ չի ապացուցում, վոր տվյալ մարդը հետևում ե տեղում կատարվող յերեմիույթներին՝ ինչպես բնական, նույնպես ե հասարակական կյանքում, վոր նա իրերի ընթացքից հանում ե անհրաժեշտ յեզրակացություններ, վոր նա վորոնումներ ե կատարում ե այլն:

Մեր աշխատանքների ընթացքում, որինակ, շատ հաճախ ենք ականատես լինում, թե ինչպես յերբեմն իզուր են կորչում մեր բնական հարստությունները (անկախ այն հանգամանքից, թե տվյալ վայրում աշխատողը տեղացի՞ յե, թե վոչ) կամ ինչպես տրվյալ միջավայրի կլիման իր դրական ու բացասական ազդեցություններով չիմանալու պատճառով չեն գործադրվում հողագործությունը բարձրացնելու անհրաժեշտ ու հնարավոր ձևերը, չեն մտցվում նոր մշակութիւններ: Քիչ չեն յեղել այն դեպքերը, յերբ մեր ամբողջ պրոպագանդան ու ագիտացիան չեն տվել սպասած արդյունքները. ստուգում ենք և պարզում, վոր այլ կերպ չեր կարող լինել, քանի վոր ի նկատի առնված չի յեղել, թե ինչո՞վ և հետաքրքրվում բնակչությունը տրվյալ մոմենտին, վո՞րն և նրա ցավոտ կողմը և այլն: Այստեղից հասկանալի յե, վոր ինչ ասպարիզումն ևլ ու վորտեղ ևլ աշխատելու լինենք (ծննդավայրում, թե այլուր), համենայն դեպս ամենից առաջ պետք և ուսումնասիրենք տվյալ միջավայրը:

Գործունեյության շրջանին պետք և լավ ծանոթ լինել հատկապես նրա համար, վորովհետև իմանալով, լավ ճանաչելով տվյալ դավառամասը՝ հնարավորություն կունենանք փոխելու նրա կյանքը, նոր, սոցիալիստական ձևով դասավորելու բնակչության պայմանները, բարձրացնելու գյուղատնտեսության ու

արդյունաբերութեան արտադրողականութեանը: Մի խոսքով մաքսիմում ոգուար տալու տվյալ միջավայրին, հասցնելու նրան սոցիալ-տնտեսական ու կենցաղային բարձր աստիճանի:

Գործունեություն չըջանին հմուտ ծանոթ լինելու առավելությունը շատ լավ են հասկանում բուրժուական յերկրները. դրա համար ել նրանք ջանք ու ճիգ չեն խնայում, — այդ ուղիով թյամբ մեծ արդյունքներ ստանալու համար: Սակայն այդ ամբողջ աշխատանքը նրանք տանում են հայրենագիտական թեքումով, ուժեղ կերպով անցկացնելով այն հայրենասիրական գաղափարների միջոցով:

Մինչ հեղափոխությունը դավառագիտություն զրադվում եյին մեծ մասամբ գիտական ընկերությունները, վերոնք հատուկ ուշադրություն եյին դարձնում գլխավորապես ֆուկլորի վրա՝ սլատմական անցյալի, ժողովրդական ստեղծագործության, սովորությունների, յերգերի, ասացվածքների, առածների, հավատալիքների և այլն: Տեղի տնտեսություն ուսումնասիրություն ընդհանրապես զրադվում եյին զեմսովոները:

Այժմս արդեն սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական այս միանգամայն նոր պայմաններում դավառագիտություն ունի բոլոր տվյալները դառնալու և նա պետք և դառնա մասսայական շարժում: Այժմս արդեն նա գերադանցապես ընդգրկելու յե յերկրի բը-

նական ուժերի ներկա վիճակի և նրանց պատմութեան և եկոնոմիակայի ուսումնասիրութեան խնդիրները:

Վոմանք կարող են հարց տալ, թե չե՞ վոր գոյութեան ունեն պետական համապատասխան մարմիններ, վորոնք զբաղվում են մեր յերկրի այս կամ այն առանձին բնագավառների մանրազնին ուսումնասիրութեամբ. դրանցից են, որինակ՝ Լեռնային բաժինը, Հայջրբանաստութեանը, ՀԺԿ-ի գիտահետազոտական վարչութեանը, Ոգերեվույթարանական կայանը, Դռերի վարչութեանը, Հնութեանների Պահպանութեան Կոմիտեն, Գիտութեան և Արվեստի Ինստիտուտը և այլն: Կարիք կա՞ արդյոք սրանցից բացի ըստեղծելու նաև դավառագիտական կազմակերպութեաններ. չե՞ վոր սրանց աշխատանքներն ավելի մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրութեան կատարում են վերոհիշյալ մարմինները: Հենց կարևորն ել այն է, վոր անպայման կարիք կա և այն ել ավելի քան մեծ կարիք: Ինչո՞ւ, վորովհետև վերը թված պետական մարմիններն իրենց նպատակներին չեն կարող լրիվ կերպով հասնել, յեթե նրանց աշխատանքներին մեծ չափով իրենց մասնակցութեանը հանդես չբերեն աշխատավորական լայն մասսաները: Իսկ վերջիններիս գիտական հետազոտական աշխատանքների շուրջը կադմակերպողները հանդիսանալու յեն դավառագիտական մարմինները, վորոնք աշխատավո-

լաւան լայն մասսաներին ընդգրկելով իրենց աշխատանքներում՝ մի կողմից նրանց միջոցով հետազոտման են յենթարկում տվյալ միջավայրը (անշուշտ վոչ մանրամասն մասնագիտորեն), իսկ մյուս կողմից այդ հետազոտման արդյունքները տարածում հասարակական լայն խավերի միջև. սրանով նրանք մեծ չափով զարկ են տալիս մեր յերկրի վերակառուցման մեծ գործին: «Պորհրդային գալառագիտությունը, —ասում է Պինկեվիչը, —սա պրոլետարական հասարակայնության կողմից սոցիալիստական շինարարությանը նպաստող ձևերից մեկն է՝ տվյալ վայրը բազմակողմանի, գիտականորեն ուսումնասիրելու տեսակետից»: Գալառագիտությունը հանդես բերելով մասսաների ինքնագործունեյությունը՝ նպատակ է դնում միջավայրի բազմակողմանի գիտողություններն ու հետազոտությունները և սրանց արդյունքները տրամադրելով մեր պետական շահագրգռված մարմիններին ու համապատասխան աշխատանք տանող կազմակերպություններին՝ սրանով իսկ հեշտացնում են վերջիններիս աշխատանքները՝ մի կողմից, և այդ ամբողջ արդյունքները դարձնում աշխատավորական լայն մասսաների սեփականություն՝ մյուս կողմից:

Եւ չենք ասում այն մասին, վոր ուսումնասիրության արժանի մի շարք բնագավառներ, ինչպես որինակ՝ տեղական, տնտեսական կյանքը, կրիման, կենցաղը և այլն

դժվար և ուսումնասիրել և քապեղիցիոն ճա-
նապարհով, վորը կարճատև ժամանակի հետ և
կասկած. այստեղ անշուշտ անհրաժեշտ և սիս-
տեմատիկ ու տեական, յերկարատև դիտողու-
թյուն (наблюдение), վորպիսին դարձյալ
ի վիճակի յեն անելու գալառագիտական մար-
մինները, տեղական գալառագետը:

Սոցիալիստական շինարարությունն այժմս
ընթանում և գլխավորապես հետևյալ ուղիներ-
րով. 1. արդյունաբերության վերակառուցում
և ռացիոնալացում, 2. գյուղի կուլեկտիվա-
ցում. ամբողջ գյուղատնտեսության մեքենա-
յացում և ռացիոնալացում, 3. քաղաքի շինա-
րարության ընդլայնում ու նոր քաղաքների
կառուցում, 4. կուլտուրական աշխատանք-
ների ծավալում:

Ի՞նչ խոսք, վոր այս բոլոր բնագավառներ-
ումն ել գալառագիտությունն անպայման
պետք և գրավի վորոշ տեղ: Քաղաքի բոլոր
հիմնարկ-ձեռնարկների, բոլոր կադմակեր-
պությունների կուլտ աշխատանքները պետք և
լրացվեն գալառագիտական խմբակների աշ-
խատանքներով, նրանց ձեռք բերած տվյալ-
ներով: Գալառագիտական մեթոդների լայն
կիրառմամբ քանակական և վորակական բազ-
մակողմանի ուսումնասիրություն պետք և կա-
տարել տվյալ հիմնարկ-ձեռնարկի ամբողջ
աշխատանքի նկատմամբ՝ նրա զարգացման
պրոցեսում:

Նույնը նաև գյուղի նկատմամբ: Քաղ-

լուսաշխատանքը գլուղում անսլալման պետք ե
լրացվի կու. և խորհ. տնտեսությունների,
գլուղխորհուրդների, գլուղական գաղթոցների
ու այլ կազմակերպությունների գավառագի-
տական աշխատանքներով: Գլուղատնտեսա-
կան աշխատանքների գավառագիտական մե-
թոդներով ուսումնասիրելը, արդյունքների
ցուցահանելը գավառագիտական թանգարանե-
րում, ցուցահանուհիներում, անկյուններում և
կամ կու. ու խորհ. տնտեսությունների նկա-
րագրություններում, — կտան միանգամայն
գերական արդյունքներ:

Այստեղից ել միաժամանակ հետևում մի
ուրիշ չափազանց կարեւոր հանգամանք. այն,
վոր գավառագիտությունը նեղ կարիքետային
աշխատանք չէ, ինչպես կարծում ելին շատե-
րը, կամ գուցե և այժմս ել տրամադիր են վո-
մանք կարծելու, այլ լայն հասարակական մաս-
նայական աշխատանք:

Գավառագիտությունը մասնայական շար-
ժում ե, մասնաներին գիտության մեջ ներգը-
րավելու խթան: Ուրեմն գավառագիտությամբ
կարող են զբաղվել վոչ միայն առանձին մաս-
նագետները, այլ և ամեն վոք, ով գիտակցում
ե սրա կարեւորությունը և սիրում այս գործը:

Այս աշխատանքներում անսլալման պետք ե
իրենց լայն մասնակցությունը հանդես բերեն
աշակերտները, ուսանողները, ուսուցչությու-
նը, պիոներներն ու կոմյերիտականները, քա-
ղաքի բանվորական, աշխատավորական տար-

քերը, գյուղական աշխատավորական մասսան, կարմիր բանակայինները, կին պատգամավորուհիները և այլն. մի խոսքով մեր կաղմա-կերպված տեղական ամբողջ մասսան:

Գալփառագիտությունը հանդիսանում է կամուրջ գիտության ու մասսաների միջև. նա պետք է ստեղծի այն բարենպաստ դրությունները, վերոնք անհրաժեշտ են մի կողմից գիտության և կուլտուրայի, իսկ մյուս կողմից՝ մասսաների յուսավորության համար:

Այս բոլորից միանգամայն միաժամանակ պարզ է, թե ինչո՞ւ յերկրի ինդուստրացման գործում գալփառագիտական աշխատանքներին չափազանց կարևոր նշանակություն են տալիս խորհուրդների 4-րդ համագումարը, Պլանային Հանձնաժողովները և վերջապես կուսակցա-կան վերջին համագումարները:



Մի քանի խոսք ել ասենք այն մասին, թե գալփառագիտական մարմինների կողմից կաղմակերպչական ի՞նչպիսի հիմնական միջոցներ կարող են գործադրվել աշխատանքների ծավալման համար, (վերպիսի միջոցներից մի քանիսը մեզ մոտ՝ խորհրդային Հասարակական գիտությունների դեռ ևս լրիվ չափով չեն կիրառվում):—

Կաղմակերպվում են պատանի բնասերների խմբակներ, դպրոցական, հիմնարկ-ձեռնարկային, կուլ. ու խորհ. տնտեսային, խրճիթ-

րնթերցարանային, ակմբային գալառագիտա-
կան խմբակներ:

Կազմակերպւում են ինչպես լայն մաս-
առյալիան եքսկուրսիաներ, նույնպես և գիտա-
կան արշավախմբեր ու գործուղումներ ա-
ռանձին անհատներին՝ տվյալ գործունեյու-
թյան շրջանի ներկա ու անցյալ բնական, ար-
տադրական և հասարակական կյանքն ուսում-
նասիրելու համար: Անհրաժեշտության դեպ-
քում տալիս են մրցանակներ համապատաս-
խան աշխատություններին համար:

Հրավիրւում են նիստեր, կոնֆերենցիա-
ներ, համագումարներ, խորհրդակցություն-
ներ, ուր միաժամանակ յերևան են հանւում
հետազոտությունների արդյունքները. կազ-
մակերպւում են հատուկ դասընթացներ և այլն
ու այդպիսով սամեն կերպ աջակցում տվյալ
գալառի ուսումնասիրությանը:

Միաժամանակ հավաքում են նյութեր և
կազմում հավաքածուներ. հիմնում են թան-
գարաններ, գրադարաններ, լաբորատորիա-
ներ, ողերելույթաբանական կայաններ ու այլ
գիտարաններ և փորձնական կայաններ, տեղե-
ւաւորութիւն, մշտական ու շարժական ցու-
ցահանդեսներ և այլն: Կազմում են գրքեր և
ռիլյեֆ ու սովորական քարտեզներ:

Այս ամենի հետ միասին գալառագիտա-
կան կազմակերպություններն աջակցում են
մանկավարժական հաստատություններին դըպ-
րոցական նորմալ ծրագրերը տեղական պայ-

մաններին համարեցնելու գործում: Նրանք
զուգընթացաբար կենդանի կապ են հաստա-
տում պետական ու հասարակական համապա-
տասխան կազմակերպությունների հետ, նրանց
աշխատանքներին աջակցելու նպատակով: Յեվ
վերջապես գործակցում են Խորհրդային Միու-
թյան մեջ գործող դավառագիտական զանա-
զան մարմինների ու կազմակերպությունների
հետ՝ ինչպես գրավոր կամ հատուկ գործու-
ղումների միջոցով, նույնպես և համազումաբ-
ներին, կոնֆեարնաներին ու այլ հավաքույթ-
ներին փոխադարձ մասնակցությամբ:

Կապված լինելով յերկրի բնական արտա-
դրական պայմանների և պատմության ու եկո-
նոմիկայի ուսումնասիրության հետ՝ դավա-
ռագիտությունը, բնականաբար, չի կարող
գուգրնթացաբար չընթանալ որևէ անմիջական
սյահանջների, կարեվոր ու հրատապ խնդիր-
ների հետ, վորոնք առաջադրվում են կուսակ-
ցական ու Խորհրդային ղեկավար մարմինների
կողմից:

Այսպես որինակ, այժմս վերակառուցման
այս արագատեմպ վերելքի ընթացքում, յերբ
գյուղում այսօր կատարվում և պատմության
մեջ մինչ որս չը տեսնված հեղափոխություն,
յերբ անվերադարձ կերպով հիմնահատակ և
լինում հին գյուղի նահապետական կառուց-
վածքը՝ տեղի տալով հասարակական միան-

դամայն նոր կառուցվածքի, — ահա մի այսպիսի ժամանակաշրջանում կարող եյին գաղա-
ռագիտական կազմակերպությունները հեռվից
սրասիւլ գիտողի դերում լինել. անշուշտ՝
վոչ: Այժմս ավելի քան նշանակալից են դառ-
նում գալառագիտական ուղղությամբ տվյալ
միջավայրում կատարելիք գիտողություննե-
րը, հառադոտություններն ու ուսումնասիրու-
թյունները:

Գյուղի աշխատավորական մասսան վճռա-
կան բեկում ե կատարում հասարակական կյան-
քում, նա ընթանում ե գյուղի վերակառուց-
ման, նոր սոցիալիստական ուղիներով. կեն-
սազործում ե համատարած կոլեկտիվացում:

Այսոր խորհրդային ամբողջ հասարակա-
յության ու բոլոր կազմակերպությունների
ուշագրության ամենակարեւոր ստանցքն ե
հանդիսանում ներկայումս համտարած կոլեկ-
տիվացման շարժումը, վորպես գյուղում սո-
ցիալիզմի իրականացման ամենակտրուկ մի-
ջոցը:

Ի՞նչ կասկած, վոր գալառագիտական ըն-
կերություններն ու կազմակերպությունները
ևս, վորոնց աշխատանքը ներկայումս ամբող-
ջովին ուղղված պետք ե լինի մեր արգյունա-
բերության և գյուղատնտեսության վերակա-
ռուցմանը նպաստելուն, նույնպես պետք ե ի-
րենց աշխատանքի ամենաաշխատեական բնա-
դավաւր դարձնեն կոլիտոզ շարժման ուսումնա-
սիրությունը: Նրանք վորպես իրենց միջա-


վայրն արտացոլող գիտական կազմակերպու-
թյուններ՝ պետք է հանդես բերեն իրենց գոր-
ծունեյալթյան շրջանի կոլիսող շարժման լրիվ
պատկերը։*)

Կամ վերցնենք մի այլ վոչ պակաս կարե-
վորություն ներկայացնող խնդիր։ Այժմս
խորհրդային ամբողջ հասարակայնության ու-
շագրության կենտրոնն է կազմում յերկրորդա-
կան եքսպորտի խնդիրը։ Եքսպորտի վորակի
բարձրացումը, նոր եքսպորտային հողված-
ների հայտնաբերումը՝ յելնելով ոտարերկրյա
շուկաների պահանջներից, — այս ամենը մեր
արտաքին առևտրի քաղաքականության ամե-
նասկստուալ խնդիրներն են կազմում։

Այս հարցերի գիտական մշակումը և գի-
տական հետազոտական աշխատանքների փոր-
ձի փոխանակությունը մեծ անհրաժեշտու-
թյուն են ներկայացնում։

Ի՞նչ խոսք, վոր գավառագիտությանը
մեծ դեր է վերապահվում այս գործում, և գա-
վառագիտական կազմակերպություններն ան-
սլալման պետք է իրենց լայն մասնակցությունը
հանդես բերեն ու աջակցության գան մեր դե-

*) Գավառագիտական Կենտ. Բյուրոյի կողմից
Խորհրդային Հայաստանի գավառագիտական ընկերու-
թյուններին ուղարկված են Գավառագիտական Կենտ.
Բյուրոյի և Յերեվանի ընկերության կողմից մշակված
հատուկ հարցաթերթեր, կոլիսող շարժման ուսումնա-
սիրության համար։



կալար մարմիններին, այս խնդրում: Նրանք իրենց գործունեության շրջանում պետք է ամենաուշագիւր կերպով զննեն ու հայտարարեն այն ամենը, ինչ վոր կարող է պիտանի լինել ու առնչություն ունենալ յերկրորդական եքսպորտի հետ՝ յեղջուրներ, կծղակներ, փայլար, զանազան յուրահատուկ բույսեր, հանքեր և այլն (այս տիպի նյութերի համապատասխան բաժանումներով մանրամասն ցուցակը ՀՍԽՀ Գավառագիտական կենտ Բյուրոյի կողմից ուղարկված են տեղական պավառագիտական ընկերություններին): Մի խոսքով հայտարարեն այնպիսի նյութեր, վորոնք առարկա կյանքում այնքան եւ արժեքավոր չեն, գուցե և բոլորովին անարժեք, սակայն արտահանության տեսակետից միանգամայն պիտանի չեն, այն չափով, վոր չափով նրանք կարելի չե դարձնել նյութական միջոցների ու արտահանության ուժեղ մի Ֆոնդ:


Գավառագիտական ընկերություններն ու կազմակերպություններն իրենց այս ուղղությամբ կատարած աշխատանքներով միաժամանակ խոշոր չափով նպաստում են նաև տրվյալ գավառի տնտեսական նշանակալից բարելավմանը, քանի վոր վերոհիշյալ նյութերի արտահանությունից գոյացած միջոցներով ձեռք են բերվելու գյուղատնտեսական մեքենաներ տվյալ վայրի համար:

Յեւ այլն. որինակներ շատ կարելի չե բերել, ցույց տալու համար, վոր գավառագի-

տությունն իր ընթացիկ աշխատանքների հետ
միասին ղուգընթացաբար գնում և և պիտի գնա
մեր որմա անմիջական պահանջների հետ :

Անձ և գավառագիտության նշանակու-
թյունը և առավել ևս մեծ այսոր՝ մեր յերկրի
սոցիալիստական այս արագասլաց վերելքի
ընթացքում . ուստի և խորհրդային ամեն մի
գիտակից ու ազնիվ քաղաքացի գավառագի-
տությունը չպիտք և բաժանի իր ամենորյա
աշխատանքներից :





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045808

(064.)

8231

ጥቅም 5 ነገር.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045808